ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ Վ. Գալոյան

«---------» ----------2022թ.

Digitally signed by GALOYAN VARDUHI 7705800268
Date: 2022.09.28 12:05:15 GMT+04:00

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ

ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ

ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

<<ՀՀ Գեղարքունիքի մարզի Հայրավանք գյուղի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

Վեցերորդ դասարան

ուսումնական հաստատության անվանումը , դասարան

Պետրոսյան Սուսաննա Հայկի

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

« 2022- 2023 » ուսումնական տարի

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը)

2022-2023 ուստարում վեցերորդ դասարանում սովորում են 13 (տասներեք) աշակերտ, 7 (յոթ) աղջիկ , 6 (վեց) տղա : Դասարանում տարվում են ուսումնադաստիարակչական աշխատանքներ՝ համագործակցելով առաջավոր փորձ ունեցող ուսուցիչների հետ: Դասարանում տիրում է առողջ մթնոլորտ:

2. Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում

2022-2023 ուսումնական տարում դաստիարակչական աշխատանքի հիմնական խնդիրները համարել.

ա/ Արդյունավետ կազմակերպել ուսումնական աշխատանքները, ստեղծել անհրաժեշտ պայմաններ մտավոր և ֆիզիկական ունակությունների զարգացման համար, օգտագործել համագործակցային մեթոդներ:

բ/ Ամրապնդել ծնող-ուսուցիչ-աշակերտ կապը:

գ/ Պահպանել աշակերտի իրավունքներն ու պարտականությունները սահմանված օենքով, կարգավորելով ուսումնական ծանրաբեռնվածությունը:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3 . 1. Հոգևոր դաստիարակություն

Սովորեցնել լինել ազնիվ, հանդուրժող, գթասիրտ, բարեկիրթ, կարևորել բարոյական չափանիշները, քրիստոնեական և համամարդկային արժեքները: Աշակերտներին հեռու պահել բոլոր տեսակի աղանդներից : Ծանոթացնել եկեղեցական տա-ղավար տոներին: Ձևավորել աշակերտների մեջ արժեքային համակարգ՝ մարդասիրություն, ազնվություն, բարություն, ազգային արժեքների հանդեպ ակնածանք, դրանք պահպանելու ցանկություն:

3. 2. Գեղագիտական դաստիարակություն

Գնահատել մարդկայինը, գեղեցիկը, բարին, ճշմարիտը: Կարևորել գեղագիտական արժեքները: Դրսևորել բարեկիրթ վարքագիծ, վարվելակերպի կանոններ, շփման ձևերը: Ցուցաբերել հարգանք մեծերի, ընկերների , դիմացինի հանդեպ : Կիրառական արվեստի մասին զրույցներով դաստիարակել գեղագիտական ճաշակ և զարգացնել այն:

3. 3. Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն

Սովորողներին դաստիարակել հայրենասիրության ոգով: Նպաստել հայրենասիրական հատկանիշների ձևավորմանն ու զարգացմանը: Արժևորել և մեծարել հայ ժողովրդի մեծ զավակներին, վառ պահել 44 -օրյա պատերազմի զոհերի հիշատակը : Յուրաքանչյուրի հոգում սեր և նվիրվածություն սերմանել սեփական հայրենիքի և ժողովրդի հանդեպ:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն

Առաջնորդվել առողջ ապրելակերպի սկզբունքներով: Լինել հետևողական սեփական առողջության և անվտանգության կանոնների կիրառման գործում: Զբաղվել սպորտով, կատարել ֆիզիկական վարժանքներ, որոնք կկոփեն մարմինն ու հոգին՝ տալով կամքի մեծ ուժ, հոգու և մարմնի ամրություն:

3. 5. Աշխատանքային դաստիարակություն

Դաստիարակել աշխատասիրություն, գնահատել սեփական և դիմացինի աշխատանքը: Լինել բարեխիղճ, պատասխանատու և աշխատասեր: Աշխատանքը մարդուն պարգևում է հոգեկան բավարարվածություն, դարձնում նպատակասլաց, ուժեղ, կամային և ուրիշի արածը գնահատող: Մասնակցել համապետական շաբաթօրյակներին

3. 6. Բնապահպանական դաստիարակություն

Դաստիարակել սեր և հոգատարություն բնության նկատմամբ: Սովորողների մեջ սերմանել գեղեցիկը տեսնելու, հիանալու, գնահատելու կարողություն: Բոլորիս պարտքն է՝ պահել ու պահպանել բնությունը. նա է բարիքի աղբյուրը :

4. Դպրոց-ընտանիք կապը

Անցկացնել դասարանական , ծնողական ժողովներ, քննարկել դասարանի ուսումնադաստիարակչական գործընթացի խնդիրները, պլանավորել և մշակել այդ գործընթացի կազմակերպման ձևերը:

ՈՒՍՈՒՄՆԱ - ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ամսաթիվ	Կատարվել է
I	«Գիտելիքն ու դպրությունը թող լինեն մեզ ուղենիշ» թեմայով զրույց անցկացնել	08.09.2022	Դասղեկ աշակերտներ
II	Կազմակերպչական հարցեր. «Կարգ ու կանոնը մեզ համար է» թեմայով զրույց անցկացնել	15.09.2022	Դասղեկ աշակերտներ
III	« Ազատ թևածիր, Հայաստան աշխարհ» թեմայով զրույց՝ նվիրված անկախության 31 ամյակին	22.09.2022	Դասղեկ աշակերտներ
IV	« Ո՞վ եմ ես և ինչպիսին եմ» թեմայով զրույց-քննարկում անցկացնել:	29.09.2022	Դասղեկ աշակերտներ

V	« Ի՛մ ուսուցիչ, դու լույս ես ճառագող» թեմայով զրույց անցկացնել՝ նվիրված ուսուցչի օրվան	06.10.2022	Դասղեկ աշակերտներ
VI	« Ինչպես վարվել կոնֆլիկտային իրավիճակներում», « Ի՞նչ է կոնֆլիկտը» թեմաներով զրույց անցկացնել	13.10.2022	Դասղեկ աշակերտներ
VII	« Ինչպես եմ կազմակերպում իմ կյանքը » թեմայով քննարկում	20.10.2022	Դասղեկ աշակերտներ
VIII	« Հեռու մնանք վնասակար սովորություններից » թեմայով զրույց անցկացնել	03.11.2022	Դասղեկ աշակերտներ
IX	« Ընկերն ու բարեկամը» թեմայով զրույց իսկական ընկերասիրության և բարեկամության մասին	10.11.2022	Դասղեկ աշակերտներ
X	Կազմակերպչական հարցեր. Խթանել ուսման առաջադիմությունը, ամրապնդել դպրոցծնող կապը	17.11.2022	Դասղեկ աշակերտներ
XI	«Առողջ մարմնում առողջ հոգի » թեմայով զրույց	24.11.2022	Դասղեկ աշակերտներ
XII	« Ես զավակն եմ իմ երկրի», «Իմ երկրի խորհրդանիշները » թեմաներով զրույց-քննարկում	01.12.2022	Դասղեկ աշակերտներ
XIII	« Ինչպես պաշտպանվել բնական աղետներից» թեմայով զրույց	08.12.2022	Դասղեկ աշակերտներ
XIV	«Օրենքի առաջ բոլորն են հավասար », «Իմ իրավունքներն ու պարտականությունները» թեմաներով զրույց	15.12.2022	Դասղեկ աշակերտներ
XV	Ամանորին նվիրված միջոցառում; Սովորենք լավ, ուսման մեջ առաջադիմենք, որ կյանքում ճիշտ կողմնորոշվենք:	22.12.2022	Դասղեկ աշակերտներ
	2 – ՐԴ ԿԻՍԱՄՅԱԿ		
XVI	Առաջին կիսամյակի արդյունքների ամփոփում		Դասղեկ աշակերտներ
XVII	«Մարդիկ, որոնց հանդիպում եմ ամեն օր» թեմայով զրույց		Դասղեկ աշակերտներ
XVIII	«Իմ շրջապատն ու ես» թեմայով զրույց - քննարկում անցկացնել		Դասղեկ աշակերտներ

XIX	«Զորավիգ լինենք հայ զինվորին և հայոց բանակին» թեմայով զրույց		Դասղեկ աշակերտներ
XX	«Հետաքրքրությունը լա՞վ հատկանիշ է, թե…» թեմայով զրույց		Դասղեկ աշակերտներ
XXI	Հայկական ավանդույթներն ու ծեսերը: Ազգային կրոնական արժեքների արժևորում		Դասղեկ աշակերտներ
XXII	«Անաղարտ պահենք Մայրենին», «Եկե՛ք խոսենք հայերեն» թեմայով զրույց		Դասղեկ աշակերտներ
XXIII	«Հետևենք անվտանգ երթևեկության կանոններին» թեմայով զրույց		Դասղեկ աշակերտներ
XXIV	«Մեր սիրելի մայրեր, քույրեր…» թեմայով ստեղծագործական շարադրանք գրել		Դասղեկ աշակերտներ
XXV	«Հեքիաթների աշխարհը կախարդանք է դյութական» թեմայով զրույց անցկացնել		Դասղեկ աշակերտներ
XXVI	«Ինձ համար ամենաթանկ բանն աշխարհում» թեմայով զրույց-քննարկում անցկացնել		Դասղեկ աշակերտներ
XXVII	«Ժպիտն ու ծիծաղը մեր կյանքում» թեմայով զրույց անցկացնել		Դասղեկ աշակերտներ
XXVIII	«Բնությունն ու մարդը» թեմայով զրույց անցկացնել՝ նվիրված բնության պահպանությանը		Դասղեկ աշակերտներ
XXIX	«Իմ հայրենիքի պատմության հերոսական էջերը» թեմայով զրույց անցկացնել		Դասղեկ աշակերտներ
XXX	«Ասենք ո՛չ ցեղասպանությանը» թեմայով զրույց անցկացնել՝ նվիրված ցեղասպանության 107-ամյակին		Դասղեկ աշակերտներ
XXI	«Աշխատանքն է գեղեցկացնում մարդուն» թեմայով զրույց անցկացնել՝ նվիրված աշխատավորների համերաշխության միջազգային օրվան		Դասղեկ աշակերտներ
XXII	«Մենք խաղաղություն ենք ուզում. թող լինի այն ողջ աշխարհում» թեմայով զրույց		Դասղեկ աշակերտներ
XXIII	«Մեր պետական խորհրդանիշները» թեմայով զրույց անցկացնել		Դասղեկ աշակերտներ
XXIV	«Ինչ սովորեցինք այս տարի», «Ինչ եմ անելու ամառային արձակուրդներին» թեմայով զրույց անցկացնել		Դասղեկ աշակերտներ